ԴԻՄՈՒՄ

Հայոց Ազգագրական Ընկերութիւնը ի յիշատակ հայ գրերի 1500 ամեակի եւ տպագրութեան 400-ամեակի 1913 թ. հոկտ. 12-ից մինչև 1914 թ. հոկտ. 12-ը բաց է անում հայերէն հրատարակութիւնների ցուցահանդէս բաժին առ բաժին։ Հոկտ. 12—30 բացուեց ռուսահայ մամուլի բաժինը, որի առթիւ տեղի ունեցան դասախօսութիւններ, կազմուեց եւ տպագրւում է ռուսահայ մամուլի բոլոր նշանաւոր յօդուածների գրախօսութիւնը և ռուսահայ բոլոր խմբագրների խմբանկարը։

Հետագայում բացուելու են հետեւեալ բաժինները. 1) Ազգագրական հրատարակութիւններ, 2) Արտասահմանեան պարբերական հրատարակութիւններ, 3) Վերածնութեան շրջանի հրատարակութիւններ (Էջմիածնի, Նոր Զուղայի, Հնդկաստանի և այլն) և ընդհանրապէս Ռուսահայ հրատարակութիւններ, 4) Մխիթարեանների (Վենետիկի և Վիէննայի) հրատ., 5) Տաճկահայոց հրատ. (Պոլսոյ, Երուսաղէմի, Զմիւռնիայի, Սրմաշի և այլն, 6) Ամերիկահայոց, 7) Եգիպտահայոց և 8) Պարսկահայոց հրատարակութիւններ։

Ընկերութիւնը ամեն ջանք գործ է դնում ձեռք բերելու հայերէն բոլոր հրատարակութիւնները, որպէսզի կարողանայ Վեհափառ Կաթողիկոսից տրամադրուած Թիֆլիզի վանքի մայր եկեղեցու մօտի Էջմիածնապատկան հողաբաժնի վրայ կառուցուելիք Ընկերութեան գրադարան-թանգարանի հոյակապ շէնքը բանալ հայերէն հրատարակութիւնների ընդհանուր, ամբողջական ցուցահանդէսով և այս մատենադարանը դարձնել հայ գրերի և տպագրութեան համազգային մեծ տօնի Մնայուն յուշարձան։

Ուստի՝ Ընկերութեան խորհուրդը խնդրում է ամեն մի հայի ուղարկել իրեն թէ իւր և թէ այլ հրատարակութիւններ՝ հետեւեալ հասցէով. Армянскому Этнографическому О-ву, Тифлисъ կամ Société Ethnographique arménienne, Tifiis (Caucase)

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան Անդամ-քարտուղար՝ Ե. Լալայեան